ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

Պ Ե Տ - ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍՈՒՉ

ք.Երևան. Հանրապետության հրապարակ Կառավարության փուն 3
Ֆաքս +374 011 621740
www.minurban.am, info@minurban.am

18.03.16թ. N 25/25.2/1365-16

<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>
հասարակական կազմակերպության նախագահ
տիկին Լիանա ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ձեր 2016 թվականի մարտի 14-ի
N 271-ի 3 գրություն

Հարգելի տիկին Դոյդոյան,

<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին> ու <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով Երևանի քաղաքապետին են վերապահված բնակավայրերում աղբահանության կազմակերպման, քաղաքային նշանակության փողոցների, հրապարակների, այգիների և ընդհանուր օգտագործման այլ հասարակական վայրերի մաքրման, բարեկարգման և կանաչապատման լիազորությունները:

Շինարարության հրապարակում կապալառուն պարտավոր է շինարարական աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի շինարարության ընթացքում չառաջանան փոշու զգալի ծավալներ, իսկ շինհրապարակի աղբը չտեղափոխվի հարևանությամբ գտնվող տարածքներ:

Միաժամանակ հայտնում եմ, որ <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքով նախատեսված համապատասխան հոդվածն (հոդված 157[15]) առաջացնում է պատասխանատվության միջոցներ՝ կառուցապատողների կողմից շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցության նվազեցման և կառուցապատվող օբյեկտներում սանիտարական վիճակի բարելավման պահանջների չապահովման դեպքում, որի կիրարկման իրավասությունը վերապահված է Երևանի քաղաքապետին:

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը նշված գործընթացում գործառույթներ չունի:

Հարգանքով՝

Արամ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Սամվել Մանասյան